



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 64-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով,

համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 13՝ հերթական նիստի օրակարգը՝

1. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և համայնքի ավագանու 2011 թվականի հունիսի 9-ի թիվ 18 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

2. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:

3. Զրվեժ համայնքի վարչական տարածքում 2017 թվականի աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին:

4. Զրվեժ համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

5. Համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի N 46-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6. Համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի N 47-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7. Համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի N 48-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

8. Աղբավայրի սպասարկման աշխատանքները կազմակերպելու մասին:

9. Զրվեժ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին:

	կողմ (11)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ			
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՍՊԱՐ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ			
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ			
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ			
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ			
ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ			
ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ			
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ			
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ			
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՎԱՐ՝

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Զրվեժ

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 65-Ա

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ,
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԹԻՎ 18 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 258-Ա որոշումը,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը 7 անձից՝

Վարդանյան Վահագն Սերյոժայի - Զրվեժի միջնակարգ դպրոցի ուսուցիչ, համայնքի ավագանու անդամ, Մելքոնյան Գայանե Սևանի - ընտանեկան բուժքույր, համայնքի ավագանու անդամ,

Պապանյան Մարինե Վլադիմիրի - համայնքի ավագանու անդամ,

Սամոնյան Զհար Ահմադի - համայնքի ավագանու անդամ,

Վարդանյան Լիլիթ Վահագնի - Զրվեժի միջնակարգ դպրոցի տնօրեն,

Թադևոսյան Սուսաննա Սերյոժայի - աշխատակազմի քարտուղար,

Թադևոսյան Մարգարիտա Միխայիլի - աշխատակազմի առաջին կարգի մասնագետ:

2. Հանձնաժողովի նախագահ սահմանել Վահագն Սերյոժայի Վարդանյանին:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2011 թվականի հունիսի 9-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 18 որոշումը:

կողմ (11)

դեմ (0)

ծեռնպահ (0)

ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՍԴԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԿՐՏՅԱՆ ԳԱՐԻԿ

ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մեղրոյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 66-Ա

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Սահմանել գույքահարկի գծով արտոնություն սույն որոշման 2-րդ կետում նշված անձանց սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ Զրվեժ համայնքում հաշվառված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող այն բնակելի նշանակության շինությունների մասով, որտեղ հաշվառված են սույն որոշման 2-րդ կետում նշված անձինք՝ նվազեցնելով արտոնություն սահմանելու օրվա դրությամբ գույքահարկի գծով առկա հարկային պարտավորությունները:

2. Սույն որոշմամբ սահմանված գույքահարկի գծով արտոնությունները տարածվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձաց) ընտանիքների վրա:

3. Գույքահարկով հարկվող բնակելի նշանակության մեկից ավելի շինությունների առկայության դեպքում սույն որոշումը տարածվում է այդ շինություններից մեկի նկատմամբ՝ ըստ գույքահարկի արտոնություն ստացած անձի ընտանիքի ցանկության:

կողմ (11)

դեմ (0)

ծեռնպահ (0)

ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ	
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՍԴԱՐ	
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ	
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ	
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ	
ՄԿՐՏՅԱՆ ԳԱՐԻԿ	
ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ	
ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ	
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ	
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ	
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆ

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 67-Ն

ԶՐՎԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «դ» և «ե» կետերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, 8-րդ հոդվածի 7-րդ մասով, 14-րդ հոդվածով,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի վարչական տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար 2017 թվականի աղբահանության վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 200 դրամ,

2) ոչ կենցաղային և խոշոր եգրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 3 000 դրամ, ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 դրամ:

2. Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարը սահմանվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

1) առևտրի և բնակչության կենցաղային սպասարկման ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝

ա. մինչև 50 քառ.մետր մակերես ունեցող շինություններ՝ հինգ հարյուր դրամ,

բ. 50 քառ.մետրից ավել մակերես ունեցող շինությունների մասով՝ հինգ հարյուր դրամ գումարած 50 քառ.մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ևս երեսուն դրամ,

2) հանրային սննդի ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քառ.մետրը հիսուն դրամ,

3) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քառ.մետրը երեսուն դրամ,

4) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քառ.մետրը ութ դրամ,

5) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քառ.մետրը չորս դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շինարարական և խոշոր եգրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել 600 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար՝

1) աղբահանության վճարից 100%-ով ազատել Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձաց) ընտանիքների անդամներին:

2) աղբահանության վճարից 25%-ով ազատել սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում ընդգրկված անձանց:

կողմ (11)

դեմ (0)

ծեռնապահ (0)

ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՄՊԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Ջրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 68-Ն

ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Զրվեժ համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար սահմանել՝

- 1) տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի,
- 2) տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

կողմ (11)

դեմ (0)

ծեռնապահ (0)

ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՍՊԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
Գ. Զրվեժ





Հավելված N 1

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 28-ի N 68-Ն որոշման

**ՋՐՎԵՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 թ. ՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

2) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար վեց հարյուր դրամ,

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր դրամ,

զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ.26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար վեց հարյուր դրամ,

գ.51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,

դ.101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր դրամ,

զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար դրամ:

5. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար մեկ հարյուր հինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար,

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ,

3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ վաթսու հազար դրամ.

4) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ,

6. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ,

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

ե.201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

զ.501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ:

7.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

- 1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,
- 4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
- 5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
- 6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար վեց հարյուր քսանհինգ դրամ,

3)այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հարյուր քսանհինգ դրամ,

4)սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

9.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

10.Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքի բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

11.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ յոթ հարյուր հիսուն դրամ:

12.Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

13.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ:

14.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հինգ հարյուր հազար դրամ:

15.Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

1)3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:



Հավելված N 2

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
կազմակերպության 2016 թվականի
դեկտեմբերի 28-ի N 68-Ն որոշման

**ՋՐՎԵՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 10 000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափազրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1) մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ:

2) 1001 քառակուսի մետրից ավելի մակերես ունեցող հողամասերի համար՝ 50 000 դրամ գումարած 1000 քառակուսի մետրը գերազանցող յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար ևս 10 դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 10 000 դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 69-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի «Զրվեժի համայնքապետարանի աշխատակազմի 2017 թվականի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 46-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

կողմ (11)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ		
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՍՊԱՐ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ		
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ		
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ		
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ		
ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ		
ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ		
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ		
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ		
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Զրվեժ





Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 28-ի N 69-Ա որոշման
«Հավելված N 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 28-ի N 46-Ա որոշման

ՋՐՎԵՃԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Հավելումը (դրամ)	Հավելվածարը (դրամ)	Աշխատավարձի չափը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Համայնքապետարանի աշխատակազմ	Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	1	400000	-	-	400000
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական	-	1	240000	-	-	240000
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	270000	-	27000	297000
4		առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-2	1	200000	-	20000	220000
5		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2.2	1	190000	-	19000	209000
6		2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-3	1	180000	-	-	180000
		Ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին							
7		բաժնի պետ	Համայնքային ծառայության	2.1-2	1	240000	-	24000	264000
8		առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	200000	-	20000	220000
9		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	190000	-	19000	209000
10		2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-1	1	180000	-	-	180000
11		2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-2	1	180000	-	18000	198000
		Տեխնիկական սպասարկման անձնակազմ							
12		Գործավար	Տեխնիկական սպասարկման	-	1	150000	-	-	150000
13		Գործավար	Տեխնիկական սպասարկման	-	1	130000	-	-	130000
14		Օպերատոր	Տեխնիկական սպասարկման	-	1	150000	-	-	150000
15		Վարորդ	Տեխնիկական սպասարկման	-	1	120000	-	-	120000
16		Հավաքարար-պահակ	Տեխնիկական սպասարկման	-	1	120000	-	-	120000
		Ընդամենը			16	3140000	-	147000	3287000»



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 70-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 47-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի «Զրվեժի համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 47-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

	կողմ (11)	դեմ (0)	ծեռնպահ (0)
ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ			
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՍՊԱՐ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ			
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ			
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ			
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ			
ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ			
ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ			
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ			
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ			
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Զրվեժ





Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 28-ի N 70-Ա որոշման

«Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 28-ի N 47-Ա որոշման

**«ՋՐՎԵՃԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 23
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Հավելումը (դրամ)	Աշխատա- վարծի չափը (դրամ)
1	2	3	4	5	6	7
1	«ՋՐՎԵՃԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ	Տնօրեն	1	240000	-	240000
2		Հաշվապահ	1	145000	-	145000
3		Գանձապահ-օպերատոր	1	140000	-	140000
4		Էլեկտրիկ	1	90000	-	90000
5		Վարորդ	3	160000	-	480000
6		Վարորդ	1	120000	-	120000
7		Մեխանիկատոր	1	150000	-	150000
8		Բանվոր	3	160000	-	480000
9		Բանվոր	3	90000	-	270000
10		Հավաքարար	8	90000	-	720000
	Ընդամենը		23	1385000	-	2835000»



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 71-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 48-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի ««Զրվեժի մանկական երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2017 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 48-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

կողմ (11)	դեմ (0)	ծեռնպահ (0)
ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ		
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՍՊԱՐ		
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ		
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ		
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ		
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ		
ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ		
ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ		
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ		
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ		
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ:

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Զրվեժ



Հավելված

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 28-ի N 71-Ա որոշման



«Հավելված

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 28-ի N 48-Ա որոշման

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 18
2. Հաստիքացուցակը և պաշտոնային
դրույքաչափերը՝

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Հավելումը (դրամ)	Աշխատա- վարծի չափը (դրամ)
1	2	3	4	5	6	7
1	«ՋՐՎԵՃԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՅ» ԱՐՏԱԴՊՐՈՅԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ	Տնօրեն	1	90000	-	90000
2		Ուսուցիչներ	15	80000	-	1200000
3		Հաշվապահ	1	80000	-	80000
4		Հավաքարար	1	75000	-	75000
	Ընդամենը		18	325000	-	1445000»



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 72-Ա

ԱՂԲԱՎԱՅՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով, հաշվի առնելով այն, որ ներկայումս «Անկոլ» ՍՊԸ-ի կողմից վարձակալությամբ օգտագործվող Զրվեժ համայնքի վարչական տարածքում գտնվող աղբավայր է տեղափոխվում հիմնականում Զրվեժ համայնքի վարչական տարածքից հավաքվող աղբը և ելնելով այն հանգամանքից, որ «Անկոլ» ՍՊԸ-ն դիմել է համայնքապետարան՝ 2017 թվականի ընթացքում Զրվեժ համայնքի վարչական տարածքից աղբավայր տեղափոխված աղբի հարթեցման և աղբակույտերի ծածկման աշխատանքները կազմակերպելու պայմանագրային հիմունքներով,

համայնքի ավագանին **որոշում է.**

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ «Անկոլ» ՍՊԸ-ի հետ կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր՝ Զրվեժ համայնքի վարչական տարածքից աղբավայր տեղափոխված աղբի հարթեցման և աղբակույտերի ծածկման աշխատանքները կազմակերպելու նպատակով՝ ծախսերն իրականացնելով համայնքի բյուջեից:

	կողմ (11)	դեմ (0)	ծեռնպահ (0)
ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ			
ԲԱՂԱՍՍԱՐՅԱՆ ԳԱՍՊԱՐ			
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ			
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ			
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ			
ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ			
ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ			
ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ			
ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ			
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ			
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» դեկտեմբերի 2016 թվականի N 73-Ն

ԶՐՎԵՅ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով,

համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել՝

1) Զրվեժ համայնքի 2017 թվականի բյուջեն՝

ա. եկամուտների գծով 172,375.0 հազար դրամ,

բ. ծախսերի գծով 200,375.0 հազար դրամ,

գ. դեֆիցիտը (պակասուրդը)՝ 28,000.0 հազար դրամ:

2) Զրվեժի 2017 թվականի բյուջեի եկամուտները ըստ ձևավորման աղբյուրների, համաձայն հավելվածի հատված 1-ի:

3) Զրվեժի 2017 թվականի բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 2-ի:

4) Զրվեժի 2017 թվականի բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 3-ի:

5) Զրվեժի 2017 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելվածի հատված 4-ի:

6) Զրվեժի 2017 թվականի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելվածի հատված 5-ի:

7) Զրվեժի 2017 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 6-ի:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին 2017 թվականի բյուջետային տարում անհրաժեշտության դեպքում սույն որոշմամբ հաստատված հավելվածում բյուջեից հատկացումները վերաբաշխել բյուջետային ընդհանուր ծախսերի մինչև 2 %-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

կողմ (11)

դեմ (0)

ծեռնական (0)

ԱՎԱԳՅԱՆ ԳՆԵԼ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԳԱՍԴԱՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՐԻՇԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԱՏ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՊԱՊԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ԶՀԱՐ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2016 թ. դեկտեմբերի 28
գ. Ջրվեժ



Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 28-ի N 73-Ն որոշման

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՋՐՎԵՃ ՀԱՄԱՅՆՔԻ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է համայնքի

ավագանու 2016 թ. դեկտեմբերի 28-ի թիվ 73-Ն որոշմամբ

Արժվյանի տեղական զանձապետական բաժանմունք

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՏՎԱԾ 1
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	(հազար դրամով) այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում՝		172,375.0	172,375.0	14,500.0
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում՝	7100	72,416.8	72,416.8	X
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, (տող 1111+ տող 1112), այդ թվում՝	7131	34,396.0	34,396.0	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		32,576.0	32,576.0	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		1,820.0	1,820.0	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝	7136	29,124.0	29,124.0	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		29,124.0	29,124.0	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝	7145	8,896.8	8,896.8	X
1131	Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+տող 1146+տող 1147), այդ թվում՝	71452	8,896.8	8,896.8	X
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար, (տող 1133 + տող 1134) ընդհ.		295.0	295.0	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		295.0	295.0	X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0.0		X
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու		0.0		X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների բանավանդակային բաղադրության համար		15.0	15.0	X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի երացման բաղադրության		4,593.2	4,593.2	X
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք և սպասարկման ծախսերի համար		0.0		X
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի		400.0	400.0	X

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	(հազար դրամով) այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո		150.0	150.0	X
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ոնտանի կենդանիներ ապահովում		0.0		X
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		483.6	483.6	X
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կոնկրետ հանգրվաններ տրամադրելու համար		0.0		X
1144	ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0.0		X
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		0.0		X
1146	ժգ) Ավտոկայանատեղի համար				
1147	ժդ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար				
1148	ժե) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման իրացման թույլտվության համար		1,960.0	1,960.0	X
1149	ժզ) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար				
1150	ժէ) Այլ տեղական տուրքեր		1,000.0	1,000.0	
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր սկզբունքով առ թվում՝	7146	0.0	0.0	X
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր, (տող 1152 + տող 1153), այդ թվում՝		0.0	0.0	X
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման		0.0		X
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ		0.0		X
1160	1.5 Այլ հարկային եկամուտներ, (տող 1161 + տող 1165) առ թվում՝	7161	0.0	0.0	X
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների ուղղված (տող 1162 + տող 1163 + տող 1164) օրենք՝		0.0	0.0	X
1162	ա) Եկամտահարկ		0.0		X
1163	բ) Շահութահարկ		0.0		X

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	(հազար դրամով) այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1164	գ) Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասսանումներ		0.0		X
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0.0		X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝	7300	72,168.0	72,168.0	0.0
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7311	0.0	0.0	X
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման		0.0		X
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝	7312	0.0	X	0.0
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման		0.0	X	
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7321	0.0	0.0	X
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման		0.0		X
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝	7322	0.0	X	0.0
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման		0.0	X	
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), ոռոգ՝	7331	72,168.0	72,168.0	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		72,168.0	72,168.0	X
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ, (տող 1255 + տող 1256), այդ թվում՝		0.0	0.0	X

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	(հազար դրամով) այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից		0.0		X
1256	բբ) այլ դոտացիաներ		0.0		X
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուսվենցիաներ)		0.0	0.0	X
1258	դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական		0.0		X
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1261 + տող 1262), այդ թվում՝	7332	0.0	X	0.0
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուսվենցիաներ)		0.0	X	
1262	բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական		0.0	X	
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380+ տող 1390) այդ թվում՝	7400	27,790.2	27,790.2	14,500.0
1310	3.1 Տոկոսներ, այդ թվում՝	7411	0.0	X	0.0
1311	Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված		0.0	X	
1320	3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝	7412	0.0	0.0	X
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող		0.0		X
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334), այդ թվում՝	7415	5,420.2	5,420.2	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		4,799.2	4,799.2	X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		0.0	0.0	X
